Հավելված
ՀՀ կառավարության 2014թ.
ապրիլի 30-ի նիստի N 17
արձանագրային որոշման

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության գիտական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) ընդունումը բխում է երկրի գիտելիքահենք տնտեսական զարգացման խնդիրների լուծման բնագավառում մարդկային կապիտալի կատարելագործման և բնակչության կյանքի որակի բարձրացման անհրաժեշտությունից, ինչպես նաև մարդու մտավոր գործունեության պայմանների ստեղծման կարևորության գիտակցումից և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման պետություն-մասնավոր հատվածի համագործակցության խորացման և ընդլայնման անհրաժեշտությունից:

2. Գիտության ոլորտի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունն ուղղակիորեն և անուղղակիորեն ստեղծում է միջավայր բնակչության սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրների լուծման գործում գիտական և գիտատեխնիկական հիմնարար ու կիրառական բնույթի մոտեցումների կիրարկման համար: Գիտության ոլորտում արդյունավետության բարձրացման արդյունքում հնարավոր է ապահովել ստեղծված գիտական արդյունքների առևտրայնացում՝ նյութական ոլորտի հեռանկարային և կայուն զարգացման համար:

3. Գիտական օբյեկտները սույն հայեցակարգում դիտարկվում են որպես այնպիսի նշանակության օբյեկտներ, որոնք մեկը մյուսով փոխարինելի չեն: Դրանց օգտագործման գերակայությունը որոշվում է պետության տնտեսական զարգացման մակարդակով և սոցիալական զարգացման ռազմավարական հայեցակարգով:

4. Գիտական օբյեկտների կառուցումը, վերակառուցումը և հիմնանորոգումը և արդիականացումը դիտվում է որպես երկրի տնտեսական աճի ավելացման և

աշխատանքի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև մրցունակ գիտություն ունենալու հիմնական գործոններից մեկը:

5. Հայեցակարգը սահմանում է <<Գիտական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման>> մշակվելիք պետական ծրագրի նպատակների իրականացման ռազմավարությունը, որն արտահայտվում է խնդիրների լուծման եղանակների, ուղղությունների և փուլերի ներկայացմամբ:

6. Հասկացությունների ընկալման և կիրառման հստակեցման նպատակով Հայեցակարգում տրված են դրա բաղադրիչների բովանդակային մեկնաբանման հետևյալ սահմանումները.

Նոր շինարարություն՝ նոր ստեղծվող շենքերի, կառուցվածքների շինարարությունն է նոր մակերեսների վրա, ինչպես նաև շահագործումից հետո ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող մասնաճյուղերի և նոր արտադրությունների շինարարությունը: Եթե շինարարությունն իրականացվում է հերթերով՝ ապա նոր շինարարություն են համարվում առաջին և հաջորդող հերթերը՝ մինչև նախագծված հզորությունների ամբողջական գործարկումը:

Հիմնանորոգում՝ վերակառուցման սահմանման տակ չընկնող՝ շենքի կամ կառուցվածքի հիմնական ֆիզիկատեխնիկական, ճարտարապետա-գեղարվես-տական, պատմական և գործառնական նշանակության վերականգնմանն ուղղված միջոցառումների համալիր է՝ անհրաժեշտության դեպքում առանձին կոնստրուկտիվ տարրերի և ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների փոխարինմամբ, ինչպես նաև շահագործական ցուցանիշների բարելավմամբ:

Վերակառուցում՝ շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր է՝ ուղղված շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի նոր գործառնական նշանակությամբ օգտագործմանը և/կամ հիմնական տեխնի-կատնտեսական ցուցանիշների փոփոխմանը, շենքի կամ կառուցվածքի հուսալիության ապահովմանն ու արդիականացմանը:

7. Վերակառուցման ժամանակ հիմնանորոգման աշխատանքներից բացի կարող են իրականացվել՝

1) հատակագծային փոփոխություններ, վրակառույցների, ներկառույցների, կցակառույցների շինարարություն, կամ հիմնավորման դեպքում՝ վերջիններիս քանդում,

2) ինժեներական սարքավորման մակարդակի բարելավում՝ ներառյալ ինժեներական ուղիների վերակառուցումը՝ բացառությամբ մայրուղային,

3) շենքի ճարտարապետական արտահայտչության բարելավում,

4) գիտական լաբորատորիաների, գրադարանների և կոմունալ նշանակության օբյեկտներում օժանդակ և սպասարկող շենքերի ու կառուցվածքների ընդլայնում կամ նորերի կառուցում:

8. Սույն հայեցակարգի իմաստով՝ **արդիականացումը** կապված է սարքավորումների կամ այլ հիմնական միջոցների տեխնոլոգիական և ծառայողական նշանակության փոփոխման, բեռնվածքի աճի, նոր որակների ստեղծման անհրաժեշտության հետ՝ համաձայն սույն հայեցակարգի բովանդակության:

9**. Գիտական օբյեկտներ** են համարվում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունները, հիմնադրամները, կենտրոնները, լաբորատորիանները, կոնֆերանս դահլիճները, գիտական գրադարանները և այլ գիտական կազմակերպությունները:

II. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

10. Գիտության բնագավառի դիտարկված ոլորտների արդի վիճակը բնորոշվում է հետևյալ հիմնական գծերով և զարգացման միտումներով՝

1) հիմնականում բարոյապես և ֆիզիկապես մաշված շարժական և անշարժ գույքով և աշխատանքի ցածր զինվածությամբ,

2) գիտության ոլորտի կազմակերպությունների կողմից ստեղծված հիմնարար և կիրառական նշանակության արդյունքների ցածր առևտրայնացման մակարդակի առկայությամբ, ինչպես նաև մրցունակության հնարավորությունների սահմանափակությամբ,

3) գործող գիտության ոլորտի կազմակերպությունների քանակի նվազմամբ (միավորման հաշվին)՝ նյութատեխնիկական բազայի պահպանման ուղղությամբ ֆինանսական միջոցների սահմանափակության պատճառով,

4) գիտության ոլորտին ուղղված ներդրումների ծավալների կրճատմամբ,

5) գիտության ոլորտի կազմակերպությունների գործող զարգացման ծրագրերի և տնտեսական աճ ապահովող կիրառական և հիմնարար բնույթի հետազոտությունների և դրանց միջև առկա պահանջարկի կապի խզվածությամբ, այն է՝ գիտություն-արտադրություն կապերի խզվածություն:

11. Գիտության ոլորտի կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ներդրումները մեծ ծավալներ չեն կազմում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2010-2013 թթ. գիտության ոլորտի կազմակերպություններում պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ներդրումները և դրանց կառուցվածքն ըստ ուղղությունների

N	Ներդրումների ուղղությունները	2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.	
		Ծավալը, հազ. դրամ	Մասնա-բաժինը, %	Ծավալը, հազ. դրամ	Մասնա-բաժինը, %	Ծավալը, հազ. դրամ	Մասնա-բաժինը, %	Ծավալը, հազ. Դրամ	Մասնա-բաժինը, %
1	Գիտական օբյեկտների հիմնանորոգում	169851.6	100	124487.4	89.9	179934.4	91.1	100022.8	95.1
2	Գիտական օբյեկտների շինարարություն	0	0	14028.0	10.1	17610.1	8.9	5153.2	4.9
	ԸՆԴԱՄԵՆԸ	**169851.6**	**100**	**138515.4**	**100**	**197544.6**	**100**	**105176.0**	**100**

12. Գիտական օբյեկտների քանակի, մակերեսների, հզորության և տեխնիկական վիճակի վերաբերյալ ՀՀ ԳԱԱ և համապատասխան նախարարությունների կողմից տրամադրված տեղեկատվության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1) գիտական օբյեկտների գերակշիռ մասը կարիք ունի հիմնանորոգման, արդիականացման,

2) քաղաքային համայնքներում գիտական օբյեկտների փաստացի բեռնվածքը մեծամասամբ ցածր է նորմատիվ բեռնվածքից, ինչից հետևում է, որ նոր շինարարության համար պահանջվող ծավալները ներկայումս հարաբերականորեն ցածր են հիմնանորոգման ակնկալվող ծավալներից և սահմանափակվում են մինչև 20%-լավ, 21-40%-բավարար, 41-60%-անբավարար, 61-85%-անբավարար, 86-100%-քանդված վիճակում գտնվող օբյեկտների փոխարինման անհրաժեշտ ծավալներով,

3) գիտական օբյեկտների որոշակի մասը վերջին տարիներին հիմնանորոգվել է տարբեր ծրագրերի շրջանակներում և տարբեր ֆինանսական աղբյուրներից՝ ՀՀ պետական բյուջեի ու տարբեր դրամաշնորհներով հատկացված միջոցներով:

4) գիտական օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և արդիականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները բերված են Տեղեկանք 1-ում (ըստ առանձին կազմակերպությունների) և Տեղեկանք 2-ում (ամփոփ տեսքով),

13. Հայեցակարգի մշակման շրջանակներում հավաքագրված տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գիտական օբյեկտների տեխնիկական վիճակը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը (նկար 1):



Նկար 1. ՀՀ գիտական օբյեկտների տեխնիկական վիճակը բնութագրող ցուցանիշները

14. Հայեցակարգի մշակման շրջանակներում հավաքագրված տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի կազմակերպությունների կողմից պահանջվող ֆինանսավորման գնահատականն ունի հետևյալ տեսքը (նկար 2):



Նկար 2. ՀՀ գիտական օբյեկտների համար պահանջվող ֆինանսավորման գնահատականի կառուցվածքը

III. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Հայեցակարգի մշակման հիմնական նպատակը գիտական օբյեկտների հիմնանորոգման, նորերի կառուցման, գոյություն ունեցողների արդիականացման հեռանկարային (երկարաժամկետ՝ մինչև 15 տարի տևողությամբ) և ընթացիկ (միջնաժամկետ՝ մինչև 3 տարի տևողությամբ) փոխկապակցված ծրագրերի մշակման ռազմավարության սահմանումն է՝ հաշվի առնելով համակարգային բազմաթիվ գործոններ, որոնցից հիմնականներն են՝

1) երկրի տնտեսության զարգացման տեմպերը գիտական հիմքերի վրա կազմակերպելը,

2) գիտության ոլորտի կազմակերպությունների մրցունակության բարձրացումը,

3) համաշխարհային գիտական կենտրոնների հետ ինտեգրացիոն քաղաքականության մշակումը,

4) գիտության ոլորտի կազմակերպություններում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը,

5) գիտական արդյունքի առևտրայնացման և մրցունակության բարձրացման մոտեցումների որդեգրումն ու իրականացումը,

6) գիտության ոլորտում տեղեկատվական և ինտեգրացիոն զարգացումները:

16. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ հիմնախնդիրները՝

1) մշակել գիտական օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ձևավորման կարգը և ցուցանիշները,

2) սահմանել տեղեկատվության հավաքագրման կարգը և անհրաժեշտ միջոցները,

3) ներկայացնել առաջարկություններ ծրագրի (ծրագրերի) կատարման աստիճանի, պետական գույքի արդյունավետ կառավարման և գիտական արդյունքի ձևավորմանը նպաստող քաղաքականության մշակման և դրա ձևերի վերաբերյալ,

4) սահմանել ծրագրի (ծրագրերի) գերակայությունները և իրականացման հիմնական փուլերը,

5) հաշվարկել ծրագրի (ծրագրերի) իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մոտավոր ծավալը և սահմանել հնարավոր աղբյուրները՝ ըստ սահմանված վարչական միավորների, ելնելով ժողովրդագրական և գիտության զարգացման ցուցանիշներից,

6) վերլուծել գիտական օբյեկտներով հագեցվածության աստիճանը, ինչպես նաև որոշել այդ օբյեկտների օպտիմալ բաշխվածությունը, որը թույլ կտա ապահովել դրանց անհրաժեշտ բեռնվածությունը և նպատակային օգտագործումը,

7) ապահովել Հայաստանի Հանրապետության գիտական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման մշակվելիք ենթածրագրերի կապը,

8) պետական կառավարման համապատասխան լիազորություններ ունեցող մարմինների միջև բաշխել և համակարգել գիտական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման բնագավառում կատարվելիք գործառույթները,

9) առաջարկել և հիմնավորել գիտության առանձին ոլորտներում գույքային հարաբերությունները կանոնակարգող նոր իրավական ակտերի ընդունումը, ինչպես նաև գործող իրավական ակտերում փոփոխությունները և լրացումները,

10) ներկայացնել առաջարկություններ գիտության առանձին բնագավառներում պետական և ոչ պետական սեփականություն համարվող օբյեկտների հարաբերակցությունների վերաբերյալ,

11) ներկայացնել առաջարկություններ գիտության առանձին բնագավառներում առավել արդյունավետ գործող կազմակերպահիրավական ձևերի կիրառման (հիմնադրամ, բաժնետիրական ընկերություն, ՊՈԱԿ և այլն) վերաբերյալ,

12) ներկայացնել առաջարկություններ գիտական օբյեկտների արդիականացման ուղիների վերաբերյալ: Տվյալ խնդրի լուծումն իրականացնելու համար, մասնավորապես, առաջարկվում է կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հետևյալ մոտեցումները՝

ա. պետության և մասնավոր անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ստեղծում,

բ. հիմնադրամների ստեղծում, որը կունենա ինչպես պետական, այնպես էլ մասնավոր անձանց գույքային ներդրումներ,

գ. գույքի օգտագործման իրավունքի (վարձակալություն, հավատարմագրային կառավարում) փոխանցում:

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

17. Պետական գերակա խնդիրների լուծման անհրաժեշտությունը և գիտական օբյեկտների առկա վիճակը թելադրում են պետության կողմից ոլորտի զարգացման ընտրովի ներդրումային օժանդակման կազմակերպում, ինչը հնարավոր է միայն համապատասխան ծրագրի մշակման դեպքում: Ծրագրի և ծրագրային հայեցակարգի մշակմանը պետք է նախորդի գիտության ոլորտի հաստատությունների գործունեության վերլուծությունը, որը պետք է ներառի՝

1) պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների քանակը,

2) դրանց հիմնական միջոցների վիճակը,

3) պոտենցիալ հզորությունը,

4) փաստացի բեռնվածությունը:

18. Նշված վերլուծությունը կատարելու համար անհրաժեշտ է տեղեկատվական շտեմարանի ստեղծում: Հայեցակարգն առաջարկում է տվյալների հավաքագրման ստանդարտ ձև (Տեղեկանք 3-ը), որի 22 ցուցանիշները խմբավորված տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

1) օբյեկտի անվանումը, գտնվելու վայրը և կազմակերպաիրավական ձևը,

2) շենքերի, շինությունների քանակը և հարկայնությունը,

3) կառուցման տարին,

4) հողատարածքի և առանձին օբյեկտի մակերեսները,

5) օբյեկտի գերատեսչական և տարածքային ենթակայությունը,

6) ենթավարձակալության տրված տարածքների նպատակը և մակերեսները,

7) փաստացի բեռնվածությունը,

8) նորմատիվային հզորությունը,

9) տեխնիկական վիճակը:

19. Գիտական օբյեկտների պահանջարկը հաշվարկվում է գործող հզորությունների և գիտական ու գիտատեխնիկական հիմնարար և կիրառական բնույթի արդյունքների ստեղծման, բնակչության կանխատեսվող թվաքանակի, տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման և մյուս առանձնահատկությունների հիման վրա: Դրանց տեղաբաշխման համար անհրաժեշտ տարածքային ռեսուրսները հաշվարկվում են քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներով:

V. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ, ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ, ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20. Տեղեկատվության հավաքագրումն իրականացնելու համար անհրաժեշտ է աշխատանքային խմբի ստեղծում:

21. Տեղեկատվությունը հավաքագրվում է հետևյալ հիմնական հոսքերով՝

1) ՀՀ ԳԱԱ հետազոտական ինստիտուտներից ստացված տեղեկություններ,

2) ՀՀ նախարարությունների կազմում գտնվող գիտահետազոտական ինստիտուտներից ստացված տեղեկություններ:

22. Տեղեկատվության հավաքագրման ներկայացման և մշակման գործընթացը պետական կառույցներում իրականացվում է պարտականությունների կատարման շրջանակներում: Ֆինանսական և տեխնիկական միջոցների կարիքը հիմնականում կապված է լիցենզավորված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի գնահատման և շինարարական, վերանորոգման, տեխնիկական արդիականացման աշխատանքների կատարման նախահաշվային ծախսերի որոշման հետ, որոնց ծավալները հնարավոր կլինի որոշել ծրագրի մշակման ժամանակ:

VI. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԾՐԱԳՐԱՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

23. Գիտության ոլորտի կազմակերպությունների հիմնանորոգման, կառուցման, և արդիականացման ծրագրերի (ներառյալ ենթածրագրերի) հիմնական

ուղղությունները ելնելով ծրագրանպատակային մոտեցման կիրառման տեսանկյունից պետք է իրագործել հետևյալ կերպ.

1) հիմնանորոգման, կառուցման ծրագրեր իրականացնել բոլոր գիտության ոլորտի կազմակերպություններում՝ ապահովելու համար նվազագույն գործունեության պայմաններ,

2) այնուհետև, առաջնայնությունը տալով կիրառական և բարձր առևտրայնացման հավանականություն ու մրցունակություն ունեցող գիտական արդյունքներին՝ արդիականացման ծրագրեր իրականացնել այդ կազմակերպություններում,

3) առաջնայնություն տալ նաև համաֆինանսավորվող նախագծերին՝ պետական բյուջեի միջոցներն արդյունավետ օգտագործելու համար:

24. Գիտական օբյեկտների շինարարության ներդրումային ծրագրի (ծրագրերի) մշակման ժամանակ III բաժնում նշված գործոններից բացի անհրաժեշտ է հաշվի առնել՝

1) գիտության առանձին ոլորտներում (ճյուղերում) տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունները և համաշխարհային վերջին զարգացումները,

2) գերբեռնված հաստատությունների ընդլայնման, վերակառուցման, արդիականացման հնարավորությունը,

3) 41-60% անբավարար և 61-85% վթարային վիճակում գտնվող, շահագործման նորմերին չբավարարող և հիմնանորոգման չենթարկվող օբյեկտների վերացման անհրաժեշտությունը),

4) մրցունակ կիրառական գիտական արդյունք ստեղծող հետազոտական կազմակերպությունների առաջնային հիմնանորոգումը և արդիական լաբորատորիաների կառուցումը (համապատասխան գիտական ենթակառուցվածքների ստեղծումը միջազգային գիտության ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության համապատասխան հնարավորություններ ունենալու և նույնատիպ հետազոտություններ անելու համար):

25. Բազմաթիվ գործոնների և մասնակիցների առկայությունը, դիտարկվող ծրագրի, ՀՀ գիտության զարգացման ծրագրերի և ՀՀ կառավարության ու նախարարությունների նպատակային ծրագրերի փոխկապակցված իրացման անհրաժեշտությունը վկայում են, որ հիմնախնդիրը հնարավոր է լուծել միայն ծրագրանպատակային մոտեցմամբ՝ ստույգ սահմանելով նպատակային ծրագրի հայեցակարգը, խնդիրները, օբյեկտներն ու սուբյեկտները:

26. Նպատակային ծրագրի սուբյեկտներն են՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և տնտեսավարող սուբյեկտները (բիզնես-միավորները): Հասարակական կազմակերպությունները կարող են հանդես գալ դիտորդների դերում:

27. Ծրագրի օբյեկտներն են՝ կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման և արդիականացման ենթակա գիտական օբյեկտները:

28. Բարդ և դինամիկ այս համակարգի կառավարման համար անհրաժեշտ է համակարգող մարմնի (խորհրդի, երկարատև գործող աշխատանքային խմբի կամ այլ կառույցի) տեսքով, որը վերահսկելու է՝

1) տեղեկատվության հավաքագրմանը և վերլուծությանը, ծախսերի որոշմանը,

2) գերակայությունների հաշվառման մեխանիզմի ստեղծմանը,

3) պետական գերակա խնդիրների, մարզերում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի փոխկապակցված դիտարկման մեխանիզմի ստեղծմանը,

4) գույքի ապապետականացման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը,

5) ծրագրերի իրականացման մակարդակների սահմանմանը,

6) պահանջվող ֆինանսական միջոցների ծավալների և ծրագրի իրացման ժամկետների որոշմանը:

VII. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

29. Հայեցակարգով սահմանված հիմնախնդրի լուծման նպատակածրագրային մոտեցումը ենթադրում է նաև ծրագրի իրացման ռեսուրսների առավելագույն դիվերսիֆիկացում, ինչը ենթադրում է օբյեկտների կառավարման եղանակներում առաջատար միտումների կիրառումը՝

1) պետական-մասնավոր գործընկերության,

2) մրցակցությունների հայտարարման,

3) գույքի օգտագործման իրավունքի փոխանցման (վարձակալություն, հավատարմագրային կառավարում),

4) ստեղծված գիտական արդյունքների դիմաց մասնակի կամ լրիվ վարձատրման համակարգերի ներդրման,

30. Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է նաև՝

1) նշված ոլորտներում գույքային հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի ընդունումը, ինչպես նաև գործողներում փոփոխությունների և լրացումների իրականացումը,

2) պետական և ոչ պետական սեփականություն համարվող օբյեկտների հարաբերակցության կանոնակարգման առաջարկությունների ներկայացումը,

3) գիտական օբյեկտների կազմակերպաիրավական առավել նպատակահարմար ձևերի երաշխավորումը (բաժնետիրական ընկերություն, հիմնադրամ, ՊՈԱԿ և այլն):

31. Ռեսուրսների աղբյուրների դիվերսիֆիկացումը կարտահայտվի ծրագրերի իրականացման մակարդակների բազմազանությամբ՝

1) պետական ծրագրեր (ներառյալ՝ գիտության առանձին ոլորտների համար մշակված ենթածրագրեր),

2) պետություն-մասնավոր հատված համագործակցության ծրագրեր,

3) տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքային) ծրագրեր,

4) հովանավորների, բարեգործների կողմից իրականացվող ծրագրեր,

5) հիմնադրամների միջոցներով իրականացվող ծրագրեր,

6) այլ սուբյեկտների կողմից իրականացվող ծրագրեր:

VIII. ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

32. Օբյեկտների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գերակայությունների (առաջնահերթության) որոշման ու ժամանակացույցի սահմանման ժամանակ նպատակահարմար է կիրառել հետևյալ մոտեցումները՝

1) Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի համաչափ զարգացման գաղափարը,

2) առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա գիտական օբյեկտների ցանկերի հաստատումը,

3) վնասվածության աստիճանը,

4) նոր աշխատատեղերի ստեղծման կարևորությունը:

33. Փորձագետներն առաջնահերթ վերանորոգման կամ նոր շինարարության օբյեկտները դասավորում են առաջնայնության ցուցակի տեսքով, որտեղ հերթական համարը նույնացվում է օբյեկտին շնորհվող բալի հետ: Այնուհետև, օբյեկտները դասավորվում են ըստ փորձագետների բալային գնահատումների գումարային

արժեքների: Նվազագույն բալեր հավաքած օբյեկտները հայտնվում են ցուցակի վերին մասում և ընդգրկվում ծրագրի իրականացման առաջին փուլում:

34. Ծրագրի կատարումը նպատակահարմար է իրականացնել եռամյա ժամկետում, յուրաքանչյուր տարին համարելով որպես առանձին փուլ:

35. Ծրագրի կատարումը պետք է կրի շարունակական բնույթ՝ որպես ծրագրի նպատակային ցուցանիշ ընդունելով կառուցման, վերակառուցման և վերանորոգման կարիք ունեցող օբյեկտների քանակի առնվազն 70%-ի ներառումը տարբեր ծրագրերում: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է <<Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվող հատկացումների շրջանակներում:

IX. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՏԱՎՈՐ ԾԱՎԱԼԻ ՈՐՈՇՈՒՄԸ

36. Ծրագրի իրականացման նախապատրաստական փուլում ֆինանսական ռեսուրսների մոտավոր ծավալը կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$V= V_{ֆի}^{գիտ\ (1)} +V_{ֆի}^{գիտ\ (2)} +V_{ֆի}^{գիտ\ (...)}+V_{ֆի}^{գիտ\ (n)},$$

որտեղ յուրաքանչյուր ոլորտի ֆինանսավորումը պետք է հաշվարկել ըստ հետևյալ բանաձևի՝

$$V_{ֆի}^{գիտ\ (1\ ...\ n)} = (S_{ն} \times Y_{ն}+ S_{վկ} \times Y_{վկ} + S_{հն} \times Y_{հն}) \times (1+K_{գ}),$$

որտեղ՝

V	ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների գումարային արժեքն է, որը բաղկացած է գիտության 1-ից n ոլորտների ֆինանսական ռեսուրսներից
$V_{ֆի}^{գիտ\ (1\ ...\ n)}$	գիտության ոլորտի ենթածրագրի համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների գումարային արժեքն է
$S_{ն}$	տվյալ ոլորտի ենթածրագրով նախատեսվող նոր շինարարության գումարային մակերեսն է, մ^2
$S_{վկ}$	տվյալ ոլորտի ենթածրագրով նախատեսվող վերակառուցման գումարային մակերեսն է, մ^2
$S_{հն}$	տվյալ ոլորտում ենթածրագրով նախատեսվող հիմնանորոգման գումարային մակերեսն է, մ^2
$Y_{ն}$	տվյալ ոլորտում միջինացված տեսակարար ներդրումները նոր շինարարության համար, հազ.դրամ/մ^2
$Y_{վկ}$	տվյալ ոլորտում միջինացված տեսակարար ներդրումները

	վերակառուցման համար, հազ.դրամ/մ^2
$Y_{հն}$	տվյալ ոլորտում միջինացված տեսակարար ներդրումները հիմնանորոգման համար, հազ.դրամ/մ^2
$K_գ$	գնաճի ծրագրավորված գործակիցը՝ ծրագրի իրականացման ժամանակահատվածի համար:

37. Հայեցակարգի մշակման ընթացքում հավաքագրված տեղեկատվության վերլուծությունը վկայում է, որ գիտական օբյեկտների նոր շինարարության, վերակառուցման և հիմնանորոգման համար անհրաժեշտ տեսակարար ներդրումները կարելի է ընդունել հետևյալ սահմաններում (ծրագրի մշակման ժամանակ այս ցուցանիշները կարելի է վերահաշվարկել տվյալների ավելի լայն ընտրանքի համար).

նոր շինարարության տեսակարար ներդրումներ, հազ. դրամ/մ^2	250-260
վերակառուցման տեսակարար ներդրումներ, հազ. դրամ/մ^2	200-220
հիմնանորոգման տեսակարար ներդրումներ, հազ. դրամ/մ^2	140-150

38. Տեսակարար ներդրումների հաշվարկն անհրաժեշտ է իրականացնել գիտական օբյեկտների համար նույնպես, ցանկալի է ըստ դրանց նշանակության և տեսակների:

39. Տեղեկանք 2-ում բերված պահանջվող ֆինանսական միջոցների տվյալները՝ արտահայտելով ընդհանուր միտումները, կարիք ունեն ճշգրտման՝ մասնագիտացված հետազննությունների և նախահաշվային հաշվարկների արդյունքների հիման վրա:

X. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

40. Ծրագրի կատարողներ և պատասխանատուներ են համարվում՝

1) ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը,

2) ՀՀ քաղաքաշինության նախարարությունը,

3) ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը,

4) ՀՀ կրթության և գիտության նախարարությունը,

5) ՀՀ մշակույթի նախարարությունը,

6) ՀՀ առողջապահության նախարարությունը,

7) ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը,

8) ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը,

9) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան,

10) ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե:

Տեղեկանք 1

Հայաստանի Հանրապետության գիտական օբյեկտների հիմնանորոգման, վերակառուցման, քանդման և նոր շինարարության համար անհրաժեշտ ֆինանսավորման ծավալների (պահանջի) մասին՝ ըստ առանձին կազմակերպությունների

հ/հ	Կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը	Կազմակերպության շենք. շինությունների քանակը (հատ)	Շենք. շինությունների կառուցման տարին	Շենք(եր)ի հարկայնությունը	Շենք. շինությունների կառուցման և սպասարկման հողատարածքը (քառ. մետր)	Կազմակերպության ճյուղային ենթակայությունը	Շենք. շինություններից ենթաարկածանցման (վարձակալության) տրված տարածքները (քառ. մետր)	Շենք. շինություններից ենթակարծանցման տրված տարածքների նպատակը	Սեփականության և օգտագործման իրավունքի գրանցման վկայականները	Շենք(եր)ի ընդհանուր մակերեսը (քառ. մետր)	Աշխատողների թիվը		Շենքի բեռնվածությունը (- թերբեռնվածություն, +գերբեռնվածություն)	Շենք(եր)ի վիճակը	Շենք(եր)ի սեյսմակայունության աստիճանը	Շենքերը ենթակա են				Ռահանջվող ֆինանսավորման գնահատականը (հազ.դրամ)	Ծանոթություն
											Ընդամենը	որից՝ գիտաշխատողներ				հիմնանորոգման	վերակառուցման	քանդման	նորի կառուցման		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա																					
1	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	1	1959		660	ՀՀ ԳԱԱ			N 1025083	5121.7	99			բարվոք		51400.0				51400.0	

2	<<էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն>> ՊՈԱԿ ք. Երևան, Աբովյան փ.68	1	1895	3	1122.6	<< ԳԱԱ	-	-	28.02.2009թ. N 09/009	966.0	68	42	նորմալ բեռնվ ած 966	լավ	սեյսմակայուն	-	10000.0			10000.0	
	<<էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն>> ՊՈԱԿ ք. Երևան, Սեբաստիա	1	1935	2./1	269	<< ԳԱԱ	-	-	27.02.2009թ. N 10/009	222.2	-	-	-	անմիջապես	սեյսմանվտանգ	57772.0				57772.0	
3	<<Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ>> ՊՈԱԿ ք.Երևան, Հր.Ներսիսյան 25	3	1987 1985 1986	5 5 1	7387	<< ԳԱԱ	-	-	+	15103.3	-	-	միջ.	բավ.	2 3 1	176000.0				176000.0	
	<<Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ>> ՊՈԱԿ ք.Կապան, Լենինանքեր	2	1960 1961	2 1	7855	<< ԳԱԱ	-	-	+	1029.9	-	-	-	վատթարագույն	4		36000.0			36000	
	<<Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ>> ՊՈԱԿ ք. Կապան, Շահումյան 8	1	1965	2	509	<< ԳԱԱ	-	-	+	376.56	-	-	-	վատթարագույն	4		45000.0			45000.0	
	<<Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ>> ՊՈԱԿ Գ. Կապույտ	25	1937	1	12500	<< ԳԱԱ	-	-	+	1520	-	-	-	վատթարագույն	4	50000.0				50000.0	
4	<<Հ.Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ>> ՊՈԱԿ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15	1		2		<< ԳԱԱ				808	65			կորած			5000.0			5000.0	
5	<<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ, Լաբորատորիա 1 ք.Երևան, Ա.Իսակովի 24,	1	1950		0.498	<< ԳԱԱ			25.05.2010թ. N 2691909	837.7	224	16 7	+	բարվոք		5000.0				5000.0	Սեյսմակայունությունը չի բավարարում շին. նախագծման նյութերի պահանջներին

	<<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ, Լաբորատորիա 2, ք.Երևան, Ա.Իսակովի 24, Լաբորատորիա 2	1	1950			ՀՀ ԳԱԱ	73.5	ճաշարան	+	2286.6			+			3000.0				3000.0	
	<<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ, Ձգաբանական լաբոլատորիա ք.Երևան, Ա.Իսակովի 24,	1	2009			ՀՀ ԳԱԱ			+	234.9											ֆինանսավորում չեն ներկայացրել
	<<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ, Նոր մասնաշենք ք.Երևան, Ա.Իսակովի 24,	1				ՀՀ ԳԱԱ				2300									400000.0	400000.0	
6	<<Հ. Բունաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ ք. Երևան, Պ. Սևակի 5/1	7	1970	6	13041	ՀՀ ԳԱԱ	193.8	գիտահետազոտական գործունեության իրականացում	N2601861	7090.1			Լոմկող	սմսմոմոմդ		60000.0				60000.0	
7	<<Հիմնարար գիտական գրադարան>> ՊՈԱԿ ք. Երևան, Մ.Բաղրամյան պող. 24/6	1	1979 թ.	11	3530	ՀՀ ԳԱԱ	423.2	հանրային, գիտական	11.07.2012թ. N 11072012-01-0815	6725	85	11	սմսմոմոմ			35000.0				35000.0	
8	<<Հնագիտության և ազգագրության ինստիտուտ>> ՊՈԱԿ ք. Երևան, Չարենցի 15	2	1952	3	1603.6	ՀՀ ԳԱԱ			29.07.2009թ. N 14-1/000061	1843.8	188	128	+	բարմոմ				187000.0	200000.0	387000.0	
9	<<Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ ք. Երևան, Պ. Սևակի 5/2	1	1978-1981	5	7336	ՀՀ ԳԱԱ		ինստիտուտի արտադրամասերին միջոցների ատեղում	անհատույց օգտ. Վկայական N 2583436	3440.8	93		դարմոմ չ			60000.0				60000.0	

10	<<Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ>> ՊՈԱԿ ք.Երևան, Հասրաթյան 7	1	1972	7	12.319	ՀՀ ԳԱԱ	80	օֆիս, արհեստ.	N 2598477	10488	130	99	+	բավարար		100000.0				100000.0	
11	<<Մաթեմատիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ ք. Երևան, Մ.Բաղրամյան 24/5	2	1957 1979	3 1	1275	ՀՀ ԳԱԱ	51.5 -	ադմինիստրատիվ ղեկավարություն	09112012-01-1075	1191.2	66	48	+	ոչ բավարար		134968.0				134968.0	
12	<<Երկրաբանական գիտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ Գլխավոր մասնաշենք, ք.Երևան, Բաղրամյան 24ա	1	1965	3	2560	ՀՀ ԳԱԱ	299.1	գիտական	Հին վկայական վկ.N 1025082 20.12.2002թ.	4122.7	169	60	+	բավարար		577178.0	-	-	-	577178.0	
	<<Երկրաբանական գիտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ Գիտահետազոտական լաբորատորիա, ք.Երևան, Նորքի Այգիներ 247ա	1	1960	2	1555.8	ՀՀ ԳԱԱ	-	-	վկ.N 2658812 21.04.2011թ.	413				անմխիթար		57820.0				57820.0	
	<<Երկրաբանական գիտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ Գիտահետազոտական բազա, Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս, Վ.Համբարձումյան	1	1984	2	7520	ՀՀ ԳԱԱ	-	-	վկ.N 2504201 2-05-0046 առ 25.04.2012թ.	357.36				անմխիթար		50030.4				50030.4	

13	<<Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Կենտրոնական մասնաշենք N 1, ք. Երևան, Օրբելի եղբայրներ 22	1	1953	4	-	ՀՀ ԳԱԱ	15.8	Հասարակական կաթ.	N 2537467 05.05.2009թ.	2099.4	57	42	Խորհրդային	Վարչական		293950.0				293950.0	1057 մ2 նկուղ, գրադ. միջանցք, սան. հանգ
	<<Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, ինը հարկանի լաբորատոր մասնաշենք N 2, ք. Երևան, Օրբելի եղբայրներ 22	1	1985	9	-	ՀՀ ԳԱԱ	213.6	Մանկական պարի խումբ և օֆիս	N 2537467 05.05.2009թ.	3023.3	37	33	Խորհրդային	Վարչական		453450.0				453450.0	1684 մ2 միջանցք, տեխ. հարկ, դահլիճ, 6-րդ հարկը հանձնվել է <Բարձրագույն կրթության որակի ապահովման կենտրոն>ի իմնադրամին
	<<Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, երկու հարկանի լաբորատոր մասնաշենք N 6, ք. Երևան Օրբելի եղբ.22	1	1971	2	-	ՀՀ ԳԱԱ	-	-	N 2537467 05.05.2009թ.	244	7	6	թեթևաձուլված	Արտադրամասեր		36600.0				36600.0	122 մ2 պահեստային
	<<Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Կենդանանոցի մասնաշենք N 7, ք. Երևան, Օրբելի եղբ.22	1	1970	2	-	ՀՀ ԳԱԱ	58.8	Գիտարան	N 2537467 05.05.2009թ.	423	2	-	-	Արտադրամասեր		63450.0				63450.0	

	<<Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Փորձարարական մասնաշենք N 9, ք. Երևան, Օրբելի եղբ.22	1	1955	2	-	ՀՀ ԳԱԱ	471.5	Օֆիս	N 2537467 05.05.2009թ.	1037.9	-	-	-	բարվոք	-	79410.0	-	-	-	79410.0	471քառ.մ վերանորոգված է վարձակալների կողմից, իսկ մնացածը քտնվում է անմխիթար վիճակում:
14	<<Հայկենսատեխնոլոգիա>> ԳԱԿ>> ՊՈԱԿ Վարչական մասնաշենք, ք.Երևան, Գյուրջյան 14	1	1982	4	24939	ՀՀ ԳԱԱ	534.3	գիտաարտադրական	ՎԿ. N 2478224 24.05.2011թ.	10518.22	169	116		բարվ.	3		20000.0			20000.0	
	Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ>> ՊՈԱԿ Վարչական Միկրոբիոլոգիայի ինստիտուտի նախկին լաբորատոր մասնաշենք, ք.Աբովյան, Արզնու խճ. 4	1	1972	4	-	ՀՀ ԳԱԱ	-	-	ՎԿ. N 2807957 19.09.2011թ.	6221	-	-	-	ոչ բարվոք	3	100000.0				100000.0	
	<<Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ>> ՊՈԱԿ Վարչական Միկրոբիոլոգիայի ինստիտուտի նախկին վարչական մասնաշենք, ք.Աբովյան, Արզնու խճ. 4	1	1972	4	25640	ՀՀ ԳԱԱ	-	-	ՎԿ. N 2807957 19.09.2011թ.	1513.44	-	-	-	ոչ բարվոք	3	100000.0				100000.0	
	Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ>> ՊՈԱԿ Վարչական Մանրէների ավանդադրման կենտրոնի նախկին լաբ. մասնաշենք, ք.Աբովյան, Արզնու խճ. 4	1	1972	4	25000	ՀՀ ԳԱԱ	-		ՎԿ. N 2814413 19.09.2011թ.	3924				ոչ բարվոք	3	200000.0				200000.0	
15	<<Մեխանիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, ք. Երևան, Բաղրամյան 24/2	1	1959	3	2272.1	ՀՀ ԳԱԱ		273	01-006-042-006-001	2254	125			բարվոք		20000.0				20000.0	

16	<<Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ>> ՊՈԱԿ, ք.Երևան,Պ.Սևակի 1	1	1965	4	9013	ՀՀ ԳԱԱ	166.6		111220 12-01-1528	5416.2	194	141	Նորմալ բերանի խոռոչ	բարվոք		99000.0				99000.0	
17	<<Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ>> ՊՈԱԿ, Լաբորատոր մասնաշենք, Երևան, Նորագյուղ 108	1	1968	4	453.26	ՀՀ ԳԱԱ			N 2430375 տրված 21.07.2009թ.	2054.74	30	0		բարվոք		120000.0				120000.0	
18	<<Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն>> ՊՈԱԿ, Քիմիական մասնաշենք 1, ք. Երևան, Ազատության 26	1	1969	3	414				N 0326126	1560	17	15		բարվոք		20000.0				20000.0	
	<<Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն>> ՊՈԱԿ, Քիմիական մասնաշենք 2, ք. Երևան, Ազատության 26	1	1967	3	414				N 0326126	1560	21	19		բարվոք		20000.0				20000.0	
	<<Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն>> ՊՈԱԿ, Քիմիական մասնաշենք 3, ք. Երևան, Ազատության 26	1	1967	3	414				N 0326126	1560	37	34		բարվոք		20000.0				20000.0	

	<<Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն>> ՊՈԱԿ, Քիմիական մասնաշենք 4, ք. Երևան, Ազատության 26	1	1967	3	414				N 0326126	1560	39	37		բարվոք		20000.0				20000.0	
	<<Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն>> ՊՈԱԿ, Քիմիական մասնաշենք 5, ք. Երևան, Ազատության 26	1	1969	3	414				N 0326126	1560	24	22		բարվոք		20000.0				20000.0	
	<<Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն>> ՊՈԱԿ, Քիմիական մասնաշենք 6, ք. Երևան, Ազատության 26	1	1969	3	414		1560	Դեղերի արտադրություն	N 0326126	1560				բարվոք		20000.0				20000.0	
	<<Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն>> ՊՈԱԿ, Գլխավոր մասնաշենք, ք. Երևան, Ազատության 26	1	1964	4	1000				N 0326126	5361.5	128	83		բարվոք		50000.0				50000.0	
19	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ Վարչական շենք, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1958	2	273.9				2389346	547.8	9					15000.0				15000.0	
	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ Փոքր լաբորատոր շենք, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1968	2	361				2389346	722	21	13				25000.0				25000.0	

	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ Գլխավոր շենք, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1948	3	448				2389346	1344	34	29				60000.0				60000.0	
	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ Վ.Համբարձումյանի տուն-թանգարան, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1949	2	190.8				2389346	381.6	5	1				25000.0				25000.0	
	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ 2.6մ աստղադիտակի աշտարակ, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1974	3	1502				2389346	4506	6	3				40000.0				40000.0	
	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ 1մ Շմիդտի դիտակ, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1961	2	134.4				2389346	268.8	5	1				15000.0				15000.0	
	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ 0.5մ Շմիդտի դիտակ, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1955	2	53.5				2389346	107	2	2				10000.0				10000.0	

	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ 0.5մ Կասեգրեն դիտակ, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1951	3	42.2				2389346	126.6	3	3				7000.0				7000.0	
	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ 0.4մ Կասեգրեն դիտակ, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1953	3	42.2				2389346	126.6	1	1				7000.0				7000.0	
	<<Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան>> ՊՈԱԿ, Ռելյատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոն/ բն. տուն 14/	1	1952	2	235.8				2389346	471.6	10	10				5000.0				5000.0	
20	<<Պատմության ինստիտուտ>> ՊՈԱԿ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4	1	1970	11	500	ՀՀ ԳԱԱ	-	-	2694618	355.9	305		Լոտվող	Ձեռքում չ		70000.0				70000.0	
21	<<Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ, Մասնաշենք -1 ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ-2	1	1970	4	1050	ՀՀ ԳԱԱ			+	4430	30	25				20000.0				20000.0	
	<<Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ, Մասնաշենք -2, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ-2	1	1977	4	947	ՀՀ ԳԱԱ			+	5146.9	83	15				20000.0				20000.0	

	<<Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ, Մասնաշենք -3, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ-2	1	1983	4	757	ՀՀ ԳԱԱ			+	3239.7	21	5				50000.0				50000.0	
	<<Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ, Մասնաշենք Կրիստալ, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ-2	1	1989	2	4870	ՀՀ ԳԱԱ				8332.2	16	5				30000.0				30000.0	
	<<Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ, Մասնաշենք Ռադ/կայան, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ-2	1	1968	2	511.7	ՀՀ ԳԱԱ				505	3	1				12000.0				12000.0	
	<<Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ, Մասնաշենք ԱՏԲ, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ-2	1	1974	3	1897	ՀՀ ԳԱԱ				3706	11	3				20000.0				20000.0	
22	<<Ակադ. Մ.Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ Ջերմ. Մշակման դահլիճ, ք.Երևան, Արղության 2, նրբ., շ.10	1	1971	1	5000	ՀՀ ԳԱԱ				1330				բարվոք			2000.0			2000.0	
	<<Ակադ. Մ.Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ Աղերի լաբ. ք.Երևան, Արղության 2, նրբ., շ.10	1	1980	3	7000	ՀՀ ԳԱԱ				3107	53	47		բարվոք			1000.0			1000.0	
	<<Ակադ. Մ.Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ , Բազային լաբ. ք.Երևան, Արղության 2, նրբ., շ.10	1	1963	2	3000	ՀՀ ԳԱԱ				1700	28	20		բարվոք			1000.0			1000.0	

	<<Ակադ. Մ.Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ Բիոքիմիայի լաբ. ք.Երևան, Արղության 2, նրբ., շ.10	1	1967	2	2000	ՀՀ ԳԱԱ				725	17	15		բարվոք			2000.0			2000.0	
	<<Ակադ. Մ.Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ>> ՊՈԱԿ , Վարչական շենք. ք.Երևան, Արղության 2, նրբ., շ.10	1	1971	3	2000	ՀՀ ԳԱԱ				1300	16	14		բարվոք			3000.0			3000.0	
23	<<Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Վարչական շենք, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1967	3	530	ՀՀ ԳԱԱ			+	1566.5	25	5		բարվոք			15000.0			15000.0	
	<<Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Լաբորատոր մ/շենք N 3, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1965	3	1140	ՀՀ ԳԱԱ			+	3126.9	24	20		բարվոք			20000.0			20000.0	
	<<Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Լաբորատոր մ/շենք N 2, , ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1970	3	1160	ՀՀ ԳԱԱ			+	3708.3	56	42		բարվոք			65000.0			65000.0	
	<<Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Լաբորատոր մ/շենք N 1, , ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1963	3	1200	ՀՀ ԳԱԱ			+	4103.2	24	18		բարվոք			25000.0			25000.0	

	<<Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ, Փորձնական արտ/մաս N 1, ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ալիխանյան եղբայրներ 1	1	1964	2	1260	ՀՀ ԳԱԱ			+	2237.5	9			ձեռնոց			15000.0			15000.0	
24	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ Գիտկենտրոն, Վարչական մասնաշենք ք.Երևան, Պ.Սևակի 7	1	1962	4	12675	ՀՀ ԳԱԱ	տանիքի 40	հասարակական սպասարկում օրանժ	01-012-136-003	4404	110	77		Սոսնոխոժդոր	3	400000.0				400000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ էլ.ենթակայան ք.Երևան, Պ.Սևակի 7	1	1962	1		ՀՀ ԳԱԱ								Սոսնոխոժդոր	3	4000.0				4000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ Ջերմոց ք.Երևան, Պ.Սևակի 7	1	1962	1		ՀՀ ԳԱԱ								դվիմոլոթի	3		50000.0			50000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ Գենետիկայի լաբորատորիա, ք.Երևան, Պ.Սևակի 7	1	1976	2		ՀՀ ԳԱԱ							-	Սոսնոխոժդոր	3	40000.0				40000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ Վիվարիում ք.Երևան, Պ.Սևակի 7	1	1962	1		ՀՀ ԳԱԱ								դվիմոլոթի	3		57000.0			57000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ Ողնաշավորն. Բուծարան ք.Երևան, Պ.Սևակի 7	1	1962	1		ՀՀ ԳԱԱ								դվիմոլոթի	3		51000.0			51000.0	

	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ Սևանի մասնաճյուղ , Վարչական մասնաշենք, լաբորատ. ք.Սևան, Նաիրյան 186	1	1930 - 1963	3	1540	ՀՀ ԳԱԱ			05-004-006-043	1145	11	5	'	վատ	3	75000.0	75000.0			150000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ , վարչական մասնաշենք, Կոտայքի մարզ գ. Նոր-Արտամետ	1	1965	1	47090	ՀՀ ԳԱԱ			N 1725427	651	2		միջ.	բավ.	2	30000.0				30000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ , լաբորատոր Կոտայքի մարզ գ. Նոր-Արտամետ	1	1965	1	47090	ՀՀ ԳԱԱ			N 1725427	684	16	13	միջ.	բավ.	2	35000.0				35000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ , հանրակացարան Կոտայքի մարզ գ. Նոր-Արտամետ	1	1965	1	47090	ՀՀ ԳԱԱ			N 1725427	684	10	5	միջ.	անբավ.	3	20000.0				20000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ , վիվարիում 1 Կոտայքի մարզ գ. Նոր-Արտամետ	1	1965	1	47090	ՀՀ ԳԱԱ			N 1725427	684	9	5	+	անբավ.	3	20000.0				20000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ , վիվարիում 2 Կոտայքի մարզ գ. Նոր-Արտամետ	1	1965	1	47090	ՀՀ ԳԱԱ	684	էկոլոգիա	N 1725427	684				բավ.	2	20000.0				20000.0	
	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ , վիվարիում 3 Կոտայքի մարզ գ. Նոր-Արտամետ	1	1965	1	47090	ՀՀ ԳԱԱ			N 1725427	684	5	1	միջ.	անբավ.	3	20000.0				20000.0	

	<<Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ , վիվարիում 4 Կոտայքի մարզ գ. Նոր-Արտամետ	1	1965	1	47090	ՀՀ ԳԱԱ			N 1725427	684			'	դիմադրակի	4			35000.0		35000.0	
25	<<Բուսաբանության ինստիտուտ>> ՊՈԱԿ, Վարչական շենք (հին), ք. Երևան, Ավան-63, փ.Աճառյան 1	1	1952	2	679.3	ՀՀ ԳԱԱ			N 416873 24.09.2002թ.	959.4				անբավարար	7	44049.5				44049.5	
	<<Բուսաբանության ինստիտուտ>> ՊՈԱԿ, Վարչական շենք (նոր) անտառագիտության շենք,	1	1980	2	256.1	ՀՀ ԳԱԱ			N 416873 24.09.2002թ.	421	11	4		բավարար	7	3700.0				3700.0	
	<<Բուսաբանության ինստիտուտ>> ՊՈԱԿ, կոլեկցիոն ջերմատուն կլոր, ք. Երևան, Ավան-63, փ.Աճառյան 1	1	1984	1	3781	ՀՀ ԳԱԱ			N 416873 24.09.2002թ.	3125	2	1		անբավարար	7	50000.0				50000.0	
26	<<Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ>> ՊՈԱԿ, ք. Երևան, Արամի 44	1	1890	3	896.042	ՀՀ ԳԱԱ			N 2691909 25.05.2010թ.	896	49		+	բարվոք		125440.0				125440.0	
27	<<Մ.Աբեղյան անվան գրականության ինստիտուտ>> ՊՈԱԿ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15	1	1950	4	1122	ՀՀ ԳԱԱ	160		Միասնական սեղմկանք ՄՏ-02052012-01-0012	3215.3	68		Գերբեռնված	բարվոք		30000.0				30000.0	
	Ընդամենը ԳԱԱ	**121**			**548224.1**					**196072.3**						**4502217.9**	**498000.0**	**222000.0**	**600000.0**	**5822217.9**	
ՀՀ քաղաքաշինության նախարարություն																					
28	<<Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ>> ՊՈԱԿ	1	1979	1, նկուղ		ՀՀ ՔՆ	-	-	ՀՀ վարչապետի 23.11.1998թ. N 677 որոշմամբ	445	8	4	նորմալ	բավարար	-	66750.0				66750	վերանորոգում

29	<<Ճարտարապետության Ազգային թանգարան ինստիտուտ>> ՊՈԱԿ	1	1979	1, նկուղ		ՀՀ ՔՆ	-	-	27.08.2007թ. N 2289362	594	25	15	+	դադարում	-	65759.0				65759	
	Ընդամենը ՔՆ	**2**								**1039**						**132509.0**				**132509.0**	
ՀՀ մշակույթի նախարարություն																					
30	<<Պատմամշակութային ժառանգություն գիտահետազոտական կենտրոն>> ՊՈԱԿ ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3, Թաիրով 9	2	1988 1935	7	3860	ՀՀ ՄՆ			08.06.2004թ. N 1445298 06.02.2006թ. №047421	1416.7	100	55	-	դադարում	-	60000				60000	
	Ընդամենը ՄՆ	**2**			3860					**1416.7**						**60000.0**				**60000.0**	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն																					
31	ՀԱԱՀ հիմնադրամ՝ <<Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն>> մասնաճյուղ, ք.Էջմիածին, Իսի-Լե-Մուլինո 1	1	1984	5	2200	ԿԳՆ	-	-	25.05.2012թ. N04-0128	2697.4	25	11	-				14000.0			14000.0	
32	Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) Մասնաշենք N 1, 3, 4, 51 ք.Երևան, Ալիխանյան եղբայրների 2	4	1971	6	3810	ԿԳՆ			N 0608 2013-01-0022	14126	258	162	+	դադարում	7	89785.2				89785.2	
	Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) Մասնաշենք N 1 <<Արագած>> գիտ. Կայան, Արագածոտնի մարզ	1	1970	2	1250	ԿԳՆ			N 2378419	1246.5	18	12	-	դադարում	7	18225.6				18225.6	

33	ՀԱԱՀ հիմնադրամի <<Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն>> մասնաճյուղ, վարչական շենք, Արմավիրի մարզ, գ.Մերձավան	1	1965	3	1100	ՀԱԱՀ հիմնադրամ			Այո	1752.6	37	20		Լավ			18000.0			18000.0	
34	<<ՔԵՆԴԼ>> սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ>> հիմնադրամ	1	1989	3	26500	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ	-	-	N 100920 13-01-0086	6018.2	69	53	+	բարվոք	9	70000.0				70000.0	
35	<<Հ.Պետրոսյանի անվան Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն>> մասնաճյուղ, ք.Երևան, Իսակովի պող. 24	7	1958 -1967	3 և 1	18254.5	ՀՀ ԿԳՆ	-	-	N 250520 12-01-0633	3880.4	107	64	նորմայի սահմաններում	բավարար	սեյսմակայուն	48000.0				48000.0	
36	<<Մատենադարան>> Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ ՊՈԱԿ, ք.Երևան, Մաշտոցի պողոտա 53	3	1957 1985 2011	5 5 5	181.432	ՀՀ ԿԳՆ		հուշաններ ի կրպակ 15315		15315	313	121	նորմալ	բավարար	9	1500.0				1500.0	
	Ընդամենը ԿԳՆ	**18**			**53295.9**					**45036.1**						**227511**	**32000.0**			**259510.8**	
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն																					
37	<<Երկրագործության գ/կ>> ՊՈԱԿ, Արմավիրի մարզ, ք.Էջմիածին	2	1966 - 1960	3 1	1769.5	ՀՀ ԳՆ	-	-	2711561 2711561	589.8	38	24	+			4800.0				4800.0	Շենք վարչական Շենք լաբորատոր
38	<<Տեխնիկական մշակաբույսերի փ/կ>> ՊՓԲԸ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան	1	1964	2	639.1	ՀՀ ԳՆ	-	-	111N0039	319.5	9	5					3500.0			3500.0	Շենք վարչական

39	<<Բանջարա-բոստանային և տեպնիկական մշակաբույսերի գ/կ>> ՊՈԱԿ, Արարատի մարզ, գ.Պարակերտ	2	1964-1972	2	1051.5	ՀՀ ԳՆ	-	-	2297414 2297415	673.8	50	20	+			18000.0				18000.0	Շենք վարչական Շենք լաբորատոր
	Ընդամենը ԳՆ	**5**			**3460.1**					**1583.1**						**22800.0**	**3500.0**			**26300.0**	
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն																					
40	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ, վարչական մասնաշենք, ք. Երևան, Հր. Քոչար 5/2	1	1976	4	3458	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	791	51	30	+	վարձակալ		40000.0				40000.0	
	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ, 2-րդ մասնաշենք, ք. Երևան, Մ.Բաղրամյան 59գ	1	1967	3	3160	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	854	40	15	+	վարձակալ		13000.0				13000.0	
	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ ԿՖՖ և ԱՊ մասնաշենք, ք. Երևան, Թբիլիսյան խճ.25ա	1	1972	4	34000	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	3141	52	30	+	վարձակալ		15000.0				15000.0	
	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ ԿՖՖ և ԱՊ մասնաշենք, տնտեսական մասնաշենք ք. Երևան, Թբիլիսյան խճ.25ա	1	1972	1	34000	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	441	5		+	վարձակալ		10000.0				10000.0	
	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ ԿՖՖ և ԱՊ մասնաշենք, ստորգետնյա արխիվապահոց ք. Երևան, Թբիլիսյան խճ.25ա	3	1988	3	34000	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	8044			+	վարձակալ		120000.0				120000.0	
	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49	2	1980	2	656	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	1039	10	7	-	վարձակալ		80000.0				80000.0	

	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ Կոտայքի մասնաճյուղ, Միկրո թաղ. 22/2	2	1975	2	781	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	478	9	6	+	վերակառուցում		30000.0				30000.0	
	<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ, Տավուշի մասնաճյուղ, ք. Իջևան, Ղարագյոզյան 47	1	1965	3	ընդ.օգտ. տարածք	ՀՀ ՏԿՆ	-	-	այո	301	6	3	+	վերակառուցում		20000.0				20000.0	
	Ընդամենը ՏԿՆ	**12**			**110055**					**15089**						**328000.0**				**328000.0**	
ՀՀ առողջապահության նախարարություն																					
41	<<Ա.Բ.Ալեքսանյանի անվ. Համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծության ԳՀԻ>> ՊՈԱԿ, ք. Երևան, Խուդյակովի 1	1	1987	3	1176	ՀՀ ԱՆ			N1409872	1780.8	43	32	վերակառուցում	վերակառուցում		25000.0				25000.0	
42	<<Ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվ. առողջապահության ազգային ինստիտուտ>> ՊՈԱԿ, ք. Երևան, Կոմիտաս 49/4	2	1976	13.5	4791	ՀՀ ԱՆ	125.8		1554985 N 494478	8236.3 3024.6	168	25	վերակառուցում			360000.0				360000.0	
43	<<Հանրապետական գիտաբժշկական գրադարան>> ՊՈԱԿ	1	1980	2	2728	ՀՀ ԱՆ			N 2654495	723.9	43	1	+	դիմումների			203000.0			203000.0	
44	<<Ռ.Օ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն>> ՓԲԸ, ք. Երևան, Հ.Ներսիսյան 7	11	1982	7	4534	ՀՀ ԱՆ	620.4	ձեռնավարտիրական գործ.	N 2506063	6766.28	208	22	+	վերակառուցում		256000.0				256000.0	
45	<<Դատաբժշկական գիտագործնական կենտրոն>> ՊՈԱԿ, ք. Երևան, Հերացի 5/1	1	1926	3	746.75	ՀՀ ԱՆ	12.45	Սգո ծառայություն	N 1012705	1350.55	86	5	+	դեղերդ		60000.0				60000.0	

46	<<Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն>> ՓԲԸ, ք. Երևան, Նորք Մարաշ 9	3	1980	5	16203.7	ՀՀ ԱՆ			N 2479710 N 2479711 N 2479712	1959.68	199	19	բավարար	բավարար		70000.0				70000.0	
47	<<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կետրոն>> ՊՈԱԿ, ք.Երևան, Հերացի 12	4	1957	3		ՀՀ ԱՆ			N 000087	1557.3	60										Ֆինանսավորում չեն ներկայացրել
	Ընդամենը ԱՆ	**23**		**30179.5**						**14138.51**						**771000.0**	**203000.0**			**974000.0**	
	Ընդամենը	**179**		**749074.6**						**274374.7**						**6044037.7**	**736500.0**	**222000.0**	**600000.0**	**7602537.7**	

Տեղեկանք 2

Հայաստանի Հանրապետության գիտական օբյեկտների հիմնանորոգման, վերակառուցման, քանդման և նոր շինարարության համար անհրաժեշտ ֆինանսավորման ծավալների (պահանջի) մասին

ՀՀ մարզերը և Երևանը	Օբյեկտի շենք, շինությունների քանակը (հատ.)	Շենքերի մակերեսը (քառ. մետր)	Շենքերը ենթակա են				Պահանջվող ֆինանսավորման գնահատականը (հազ. դրամ)
			Հիմնանորոգ-ման հատ/(հազ. դրամ)	Վերակառուցման հատ/(հազ. դրամ	Քանդման հատ/(հազ. դրամ)	Նորից կառուցման հատ/(հազ. դրամ)	
գիտական օբյեկտներ	179	274374.7	151 6044037.7	24 736500.0	2 222000.0	2 600000.0	**7 602 537.7 (առանց 1 ԳԱԱ և 4 առողջապահական օբյեկտների)**

Տեղեկանք 3

Հայաստանի Հանրապետությունում գիտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների շենքային ապահովվածության մասին

հ/հ	Կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը	Կազմակերպության շենք, շինությունների քանակը (հատ)	Շենք, շինությունների կառուցման տարին	Շենք(եր)ի հարկայնությունը	Շենք, շինությունների կառուցման և սպասարկման հողատարածքը (քառ. մետր)	Կազմակերպության ճյուղային ենթակայությունը	Շենք, շինություններից ենթաօգտագործման (կարձակալության) տրված տարածքները (քառ. մետր)	Շենք, շինություններից ենթավարձակալության տրված տարածքների դասակարգումը	Սեփականության և օգտագործման իրավունքի գրանցման վկայականները	Շենք(եր)ի ընդհանուր մակերեսը (քառ. մետր)	Աշխատողների թիվը		Շենքի բեռնվածությունը (-թեթևբեռնվածություն, +գերբեռնվածություն)	Շենք(եր)ի վիճակը	Շենք(եր)ի սեյսմակայունության ատիճանը	Շենքերը ենթակա են				Ադամանդյան ֆինանսական կոմիտեի գնահատման	Ծանոթություն
											Ընդամենը	որից՝ գիտաշխատողներ				հիմնանորոգման	վերակառուցման	քանդման	նորի կառուցման		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1																					
2																					
3																					
....																					